Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 10-ի N 398 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐՑԻ, ՔԱՐԻՆՋԻ ԵՎ ՔԱՐԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 32 ՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարցի (12 ընտանիք), Քարինջի (13 ընտանիք) և Քարաձորի (7 ընտանիք) համայնքներում 32 ընտանիքի բնակարանային պայմանների բարելավում: 32 բնակարանի հիմնանորոգում: Բնակարանների մասնակի կահավորում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ (Երևան, Կարապետ Ուլնեցու 14) ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման ընկերակցություն (ARDA)» շահույթ չհետապնդող կազմակերպություն
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312)

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ: Քաղաքաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	78,500,000 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարցի և Քարինջի սոցիալապես անապահով 25 ընտանիք, ինչպես նաև Քարաձորի համայնքի՝ 1988 թվականի երկրաշարժի արդյունքում բնակարաններ կորցրած 7 ընտանիք: Ընտանիքների ընտրությունը կատարվել է «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի ընտանիքների ընտրության հանձնախմբի առաջարկությամբ՝ համայնքների ղեկավարների կողմից ներկայացված առավել կարիքավոր ընտանիքներից:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրն իրականացվելու է երկու փուլով՝ 1) շինարարական աշխատանքներն իրականացնելու համար շինանյութերի տրամադրում՝ 01.02.2019 թ.-30.12.2019 թ., 41,000,000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի. 2) կահույքի (հիմնականում՝ օգտագործված) և կենցաղային տեխնիկայի տրամադրում՝ 01.06.2019 թ.-31.12.2019 թ., 33,000,000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի. 3) ինժեներ-շինարարի և ինժեներ-կոնստրուկտորի աշխատավարձ՝ 4,500,000 դրամ: Շինարարական աշխատանքները հիմնականում իրականացվելու են ընտրված ընտանիքների ուժերով: Մեր կողմից իրականացվելու են շինարարության կազմակերպման, վերահսկողության աշխատանքները, ինչպես նաև կիրականացվեն առանձնակի կառուցողական լուծումներ պահանջող աշխատանքները:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայություն-ների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինարարական նյութերի, գործիքների, կահույքի և կենցաղային տեխնիկայի ձեռքբերում՝ 74,00,000 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի Նախատեսվում է, որ այս նպատակով որոշ ապրանքներ (օգտագործված կահույք, գործիքներ և այլն) կներմուծվեն ԱՄՆ-ից՝ 33,000,000 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված	Ինժեներ-շինարարի և ինժեներ-կոնստրուկտորի աշխատավարձ՝ 4,500,000 դրամ

	կազմակերպական ծախսերը	
12.	Համագործակցությունը պետական կառա-վարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ